**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-26/6-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ/4**

**N** 11/153 - 2026

ք. Երևան «19» 03 2026թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, ով գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ն, ի դեմս Ա. Պետրոսյանի, որը գործում է ՀՀ օրենսդրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 9,800,000.00 (ինը միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, Կատարողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև հանձման-ընդունման արձանագրությունների երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման

արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

4.4 Պայմանագրով սահմանված ծառայությունները մատուցվելու են պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.12.2026թ. ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո չկատարված գումարի չափով Պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ազգային անվտանգության ծառայություն | Անուշ Պետրոսյան Ա/Ձ |
| ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104 | ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 5 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011301067 | ՀՀ 1570004526688010 0 |
| ՀՎՀՀ 01507079 | ՀՎՀՀ 49557658 |
| Տնօրենի տեղակալ՝ ---------------- Ա. Հակոբյան | Ա/Ձ՝ ---------------- Ա. Պետրոսյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
«19» 03 2026թ. կնքված
ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-26/6-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ/4 (11/153-2026) ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայությունների | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գների հանրագումարը /ՀՀ դրամ/ | պայմանագրի կատարման առավելագույն գումար /ՀՀ դրամ/** | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | | | հասցեն | Ժամկետը* |
| 5 | 50111260/1 | Էլեկտրական սարքերի վերանորոգման ծառայություններ | Էլեկտրական բաշխիչ վահանակների վերանորոգում և փոխարինում, անհրաժեշտ դետալների փոխարինում, կարգաբերում:<br>0,4 և 0,22 կՎ լարման մալուխների հարդարում, ծայրապանակների տեղադրում:<br>0,4 և 0,22 կՎ լարման մալուխները վաքերի մեջով անցկացման ծառայություններ:<br>**Համաձայն հավելված 1.1-ով սահմանվող Չափաբաժին N5-ի ցանկի** | դրամ | 5,900,900.00 | 3,000,000.00 | 1 | ՀՀ ԱԱԾ ստորաբաժանումներ | 2026թ. դեկտեմբեր 20 |
| 6 | 50531110/1 | Կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայություններ | Ջեռուցման կաթսաների վերանորոգում, անհրաժեշտ պահեստամասերի փոխարինում, տեխսպասարկում, կարգաբերում:<br>**Համաձայն հավելված 1.1-ով սահմանվող Չափաբաժին N6-ի ցանկի** | դրամ | 3,299,900.00 | 4,800,000.00 | 1 | ՀՀ ԱԱԾ ստորաբաժանումներ | 2026թ. դեկտեմբեր 20 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 50711100/1 | Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ | ՀՀ ԱԱԾ ստորաբաժանումներում էլ. սարքերի վերանորոգման, կարգաբերման և պահպանման (սպասարկման) ծառայությունների մատուցում: **Համաձայն հավելված 1.1-ով սահմանվող Չափաբաժին N7-ի ցանկի** | դրամ | 649,900.00 | 2,000,000.00 | 1 | ՀՀ ԱԱԾ ստորաբաժանումներ | 2026թ. դեկտեմբեր 20 |

* *Ծառայությունների մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունները մատուցել ավելի կարճ ժամկետում:*

** ***Նշված է պայմանագրի կատարման համար առավելագույն գինը, սակայն ծառայությունները մատուցվելու են ըստ Պատվիրատուի պահանջի և դրանց դիմաց վճարումները կատարվելու է փաստացի մատուցված ծառայության դիմաց՝ հանձնման-ընդունման արձանագրությունների և ակտերի հիման վրա՝ համաձայն գնացուցակի, կիրառելով ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ բանաձևը, որտեղ՝ ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է, ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է, ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է, Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է, Ք-ն մատուցված ծառայության քանակն է, իսկ մինչև 20.12.2026 թվականը պահանջի բացակայության դեպքում՝ չկատարված գումարի չափով պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության:***

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ՝

---------------------- Ա. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

Անուշ Պետրոսյան Ա/Ձ
ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570004526688010О
ՀՎՀՀ 49557658

Ա/Ձ՝

---------------------- Ա. Պետրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-26/6-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ/4 «19» 03 2026թ. կնքված (11/153-2026) ծածկագրով պայմանագրի

# ՑԱՆԿ
# ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ և ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԵՍԱԿԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐԻ ԳՆԵՐԻ

**Չափաբաժին N 5**

| Չափաբաժնի համարը | Բնութագրող ցուցանիշները | Չափման միավորը | Ծառայության առավելագույն միավոր գինը (դրամ) |
|---|---|---|---|
| 5 | ՌՊՍ-630Ա տիպի բաժանիչ ПН-2-630А հալուն ապահովիչներով | հատ | 114000 |
| | ПР11-3108-21 400А բաշխիչ վահանի մոնտաժում | հատ | 480000 |
| | Բաշխիչ վահանի մոնտաժում 100Ա (լակազմ) | հատ | 150000 |
| | Բաշխիչ վահանի մոնտաժում 125Ա (լակազմ) | հատ | 159000 |
| | Բաշխիչ վահանի մոնտաժում 160Ա (լակազմ) | հատ | 250000 |
| | Բաշխիչ վահանի մոնտաժում 200Ա (լակազմ) | հատ | 223000 |
| | Բաշխիչ վահանի մոնտաժում 250Ա (լակազմ) | հատ | 103000 |
| | Բաշխիչ վահանի մոնտաժում 400Ա (լակազմ) | հատ | 299000 |
| | Բաշխիչ վահանի մոնտաժում 630Ա (լակազմ) | հատ | 450000 |
| | Բաշխիչ վահանի վերանորոգում 100-200 Ա | հատ | 50000 |
| | Բաշխիչ վահանի վերանորոգում 250-630 Ա | հատ | 80000 |
| | Ծայրակալ TA 120մմ ալյումին | հատ | 1400 |
| | Ծայրակալ TA 95մմ ալյումին | հատ | 1330 |
| | Ծայրակալ TA 70մմ ալյումին | հատ | 1290 |
| | Ծայրակալ TA 50մմ ալյումին | հատ | 1300 |
| | Ծայրակալ TA 35մմ ալյումին | հատ | 1200 |
| | Ծայրակալ TA 25մմ ալյումին | հատ | 1000 |
| | Ծայրակալ TA 16մմ ալյումին | հատ | 800 |
| | Ծայրակալ TM 35մմ պղինձ | հատ | 2000 |
| | Ծայրակալ TM 25մմ պղինձ | հատ | 1600 |
| | Ծայրակալ TM 16մմ պղինձ | հատ | 1200 |
| | Ծալքավոր խողովակի մոնտաժում Մ20մմ | հատ | 135 |
| | Ծալքավոր խողովակի մոնտաժում Մ25մմ | հատ | 160 |
| | Ծալքավոր խողովակի մոնտաժում Մ30մմ | հատ | 190 |
| | Ծալքավոր խողովակի մոնտաժում Մ35մմ | հատ | 230 |
| | Ծալքավոր խողովակի մոնտաժում Մ40մմ | հատ | 320 |
| | Ծալքավոր խողովակի մոնտաժում Մ45մմ | հատ | 450 |
| | Ծալքավոր խողովակի մոնտաժում Մ50մմ | հատ | 600 |
| | Ծալքավոր խողովակի մոնտաժում Մ80մմ | հատ | 1100 |
| | Բաշխիչ տուփ 100x100x50 մոնտաժում | հատ | 1240 |
| | Սական 15 մմ | հատ | 600 |
| | Սական 25 մմ | հատ | 800 |
| | Սական 40 մմ | հատ | 1500 |
| | Սական 60 մմ | հատ | 2000 |
| | Մալուխային վաքի մոնտաժում 200x50մմ L=3մ | հատ | 11100 |
| | Մալուխային վաքի մոնտաժում 200x50մմ L=2մ | հատ | 7650 |
| | Մալուխային վաքի մոնտաժում 100x50մմ L=3մ | հատ | 8400 |
| | Մալուխային վաքի մոնտաժում 100x50մմ L=2մ | հատ | 6900 |
| | Անկյուն 90° հորիզոնական 100մմ | հատ | 6600 |
| | Անկյուն 90° հորիզոնական 200մմ | հատ | 9600 |
| | Անկյուն 90° ուղղահայց 100մմ | հատ | 7600 |
| | Անկյուն 90° ուղղահայց 200մմ | հատ | 9100 |
| | Փոխանակման հորիզոնական անկյուն 45° 100x50մմ | հատ | 15600 |
| | T-նման ճյուղավորում 100մմ | հատ | 7300 |
| | T-նման ճյուղավորում 200մմ | հատ | 8300 |
| | ՍԻՊ 2x10 | հատ | 490 |

| | | | |
|---|---|---|---|
| | ՍԻՊ 2x16 | հատ | 550 |
| | ՍԻՊ 2x25 | հատ | 750 |
| | ՍԻՊ 4x10 | հատ | 900 |
| | ՍԻՊ 4x16 | հատ | 1000 |
| | ՍԻՊ 4x25 | հատ | 1500 |
| | ՍԻՊ 4x35 | հատ | 1900 |
| | Սիպ էլ. կաբելի 10-16+մմ միջանկյալ ծակիչ, կապիչ | մետր | 4000 |
| | Սիպ էլ. կաբելի 25-35մմ միջանկյալ ծակիչ, կապիչ | մետր | 5000 |
| | Սիպ էլ. կաբելի խարիսխ սեղմակ, կախիչ,նեյլոնե կապիչ և ժապավեն /լրակազմ/ | մետր | 1200 |
| | Ալյումինե մալուխ АВВГ 4x120մմ$^2$ մոնտաժ վաքով | մետր | 4800 |
| | Ալյումինե մալուխ АВВГ 4x95մմ$^2$ մոնտաժ վաքով | մետր | 4500 |
| | Ալյումինե մալուխ АВВГ 4x70մմ$^2$ մոնտաժ վաքով | մետր | 3700 |
| | Ալյումինե մալուխ АВВГ 4x50մմ$^2$ մոնտաժ վաքով | մետր | 2685 |
| | Ալյումինե մալուխ АВВГ 4x25մմ$^2$ մոնտաժ վաքով | մետր | 1430 |
| | Ալյումինե մալուխ АВВГ 4x50մմ$^2$ մոնտաժ պատով ճարմանդով | մետր | 3400 |
| | Պղնձե մալուխ ВВГ 2x4 | մետր | 900 |
| | Պղնձե մալուխ ВВГ 2x6 | մետր | 1100 |
| | Պղնձե մալուխ ВВГ 2x10 | մետր | 1300 |
| | Պղնձե մալուխ ВВГ 2x16 | մետր | 2000 |
| | Պղնձե մալուխ ВВГ 2x25 | մետր | 2500 |
| | Պղնձե մալուխ ВВГ 4x4 | մետր | 1900 |
| | Պղնձե մալուխ ВВГ 4x6 | մետր | 2500 |
| | Պղնձե մալուխ ВВГ 4x10 | մետր | 4500 |
| | Պղնձե մալուխ ВВГ 4x16 | մետր | 5500 |
| | Պղնձե մալուխ ВВГ 4x25 | մետր | 7900 |
| | Մալուխի կցորդիչի տեղադրում АВВГ 4x120մմ | հատ | 350000 |
| | Մալուխի կցորդիչի տեղադրում АВВГ 4x95մմ | հատ | 300000 |
| | Մալուխի կցորդիչի տեղադրում АВВГ 4x70մմ | հատ | 270000 |
| | Մալուխի կցորդիչի տեղադրում АВВГ 4x50մմ | հատ | 250000 |
| | Մալուխի կցորդիչի տեղադրում АВВГ 4x35մմ | հատ | 230000 |
| | Մալուխի կցորդիչի տեղադրում АВВГ 4x25մմ | հատ | 210000 |
| | Մալուխի կցորդիչի տեղադրում ВВГ 4x10մմ | հատ | 200000 |
| | Մալուխի կցորդիչի տեղադրում ВВГ 4x16մմ | հատ | 220000 |
| | Մալուխի կցորդիչի տեղադրում ВВГ 4x25մմ | հատ | 250000 |
| | Ավտոմատ անջատիչ տեղադրում 1P 16A | հատ | 1400 |
| | Ավտոմատ անջատիչ տեղադրում 1P 25A | հատ | 1600 |
| | Ավտոմատ անջատիչ տեղադրում 1P 32A | հատ | 1700 |
| | Ավտոմատ անջատիչ տեղադրում 1P 40A | հատ | 1800 |
| | Ավտոմատ անջատիչ տեղադրում 1P 50A | հատ | 2000 |
| | Ավտոմատ անջատիչ տեղադրում 1P 63A | հատ | 2500 |
| | Ավտոմատ անջատիչ տեղադրում 1P 16A | հատ | 4200 |
| | Ավտոմատ անջատիչ տեղադրում 3P 25A | հատ | 4500 |
| | Ավտոմատ անջատիչ տեղադրում 3P 32A | հատ | 4900 |
| | Ավտոմատ անջատիչ տեղադրում 3P 40A | հատ | 5200 |
| | Ավտոմատ անջատիչ տեղադրում 3P 50A | հատ | 5500 |
| | Ավտոմատ անջատիչ տեղադրում 3P 63A | հատ | 6000 |
| | թողարկիչ 25 Ա | հատ | 6000 |
| | թողարկիչ 32 Ա | հատ | 7000 |
| | թողարկիչ 40 Ա | հատ | 8000 |
| | թողարկիչ 63 Ա | հատ | 9000 |
| | թողարկիչ 80 Ա | հատ | 12000 |
| | թողարկիչ 100 Ա | հատ | 15000 |
| | թողարկիչ 160 Ա | հատ | 23000 |
| | Բաժանիչ եռաֆազ 100 Ա | հատ | 30000 |
| | Բաժանիչ եռաֆազ 160 Ա | հատ | 40000 |
| | Բաժանիչ եռաֆազ 200 Ա | հատ | 45000 |
| | Բաժանիչ եռաֆազ 400 Ա | հատ | 55000 |
| | Բաժանիչ եռաֆազ 630 Ա | հատ | 63000 |

| | | | |
|---|---|---|---|
| | ABP 100A | հատ | 350000 |
| | ABP 125A | հատ | 380000 |
| | ABP 160A | հատ | 400000 |
| | ABP 250A | հատ | 450000 |
| | ABP 400A | հատ | 550000 |
| | 4 հատ ավտոմատի տեղադրման համար պլաստմասե տուփ արտաքին տեղադրման | հատ | 3000 |
| | 6 հատ ավտոմատի տեղադրման համար պլաստմասե տուփ արտաքին տեղադրման | հատ | 4000 |
| | 10 հատ ավտոմատի տեղադրման համար պլաստմասե տուփ արտաքին տեղադրման | հատ | 5000 |
| | 16 հատ ավտոմատի տեղադրման համար պլաստմասե տուփ արտաքին տեղադրման | հատ | 9000 |
| | Էլ. վարդակ արտաքին մոնտաժի համար 220Վ, 16Ա | հատ | 1300 |
| | Անջատիչ մեկստեղնավոր արտաքին մոնտաժի 220Վ, 6Ա | հատ | 1300 |
| | Անջատիչ երկստեղնավոր արտաքին մոնտաժի 220Վ, 6Ա | հատ | 1500 |
| | Արտաքին լուսավորության լուսատուի տեղադրում 20 – 50 վտ (առանց լուսատու) | հատ | 3500 |
| | Արտաքին լուսավորության լուսատուի տեղադրում 51 – 100 վտ (առանց լուսատու) | հատ | 4000 |
| | Ներքին լուսավորության լուսատուի տեղադրում 10 – 30 վտ (առանց լուսատու) | հատ | 3000 |
| | Ներքին լուսավորության լուսատուի տեղադրում 31 – 50 վտ (առանց լուսատու) | հատ | 3500 |
| | Լուսարձակ 10-30 Վտ | հատ | 4800 |
| | Լուսարձակ 31-50 Վտ | հատ | 5500 |
| | Անցքերի բացում՝ 10-20 սմ հաստությամբ պատի | հատ | 3400 |
| | Անցքերի բացում՝ 40-50 սմ հաստությամբ պատի | հատ | 4800 |
| | Տարատեսակ կցորդիչներ,մուֆթեր,մեկուսիչ ժապավեններ և այլն օժանդակ մասեր | հատ | 3000 |
| | Կառավարման վահան, մետաղական արկղ (Բ*Լ*Խ) 1000x600x280 մմ | հատ | 75000 |
| | Կառավարման վահան, մետաղական արկղ (Բ*Լ*Խ) 600X500X300 մմ | հատ | 60000 |
| | Կառավարման վահան, մետաղական արկղ (Բ*Լ*Խ) 600X400X200 մմ | հատ | 50000 |
| | Կառավարման վահան, պլաստիկե արկղ (Բ*Լ*Խ) 400x300x170 մմ | հատ | 40000 |
| | Կառավարման վահան, պլաստիկե արկղ (Բ*Լ*Խ) 350x250x150 մմ | հատ | 35000 |
| | Ավտոաշտարակի ծառայություն | հատ | 13000 |
| | Էլեկտրամատակարարման կամ լուսավորության ցանցի թերությունների հայտնաբերում | հատ | 25000 |
| | Էլեկտրամատակարարման կամ լուսավորության ցանցի տեխնիկական սպասարկում | հատ | 30000 |
| | Բռնիչ դյուբելով ծալքավոր խողովակի համար | հատ | 47 |
| | Սեղմակներ 222-413 (սեղմակների քանակը 3) | հատ | 270 |
| | Տպիչ մալուխների համարակալման համար | հատ | 21000 |
| | Պարզեցված ռեդուկցիա | հատ | 9600 |
| | մետաղական պրոֆիլ 300մմ | հատ | 1140 |
| | Խփովի խարիսխ M10 | հատ | 160 |
| | Գամասեղ DIN 934 M10 x 2000 | հատ | 560 |
| | Մանեկ DIN 934 m10 | հատ | 15 |
| | Տափօղակ DIN 125 | հատ | 15 |
| | Միաֆազ էլ.32 Ա հզորության ավտոմատի տեղադրում | հատ | 2400 |
| | Միաֆազ էլ.25 Ա հզորության ավտոմատի տեղադրում | հատ | 2250 |
| | Էլ.կաբել 4*16 պղնձյա երկտակ մեկուսացված բազմաջիղ | մետր | 5900 |
| | Էլ.կաբել 2*1.5 պղնձյա երկտակ մեկուսացված բազմաջիղ | մետր | 405 |
| | Էլ.կաբել 2*2.5 պղնձյա երկտակ մեկուսացված բազմաթել | մետր | 590 |

| | Հանրագումարային գին՝ | ՀՀ դրամ | 7 743 752 |
|---|---|---|---|

Չափաբաժին N6

| Չափաբաժնի համարը | Բնութագրող ցուցանիշները | Չափման միավորը | Ծառայության առավելագույն միավորի գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | 50-1000 կՎտ | | |
| 6 | Օդամուղի տեղադրում | հատ | 77000 |
| | Ջերմափոխանակիչի տեղադրում (մեծ) | հատ | 145000 |
| | Ջերմափոխանակիչի տեղադրում (փոքր) | հատ | 65000 |
| | Ռեդուկտորի տեղադրում | հատ | 73000 |
| | Ճնշման անջատիչի (прессостат) տեղադրում | հատ | 24000 |
| | Պոմպ տեղադրում | հատ | 65000 |
| | Ջրի հոսքի տվիչի տեղադրում | հատ | 22000 |
| | 3 բար փականի տեղադրում | հատ | 18000 |
| | Տվիչների տեղադրում | հատ | 14000 |
| | Փականի տեղադրում | հատ | 20000 |
| | Կաթսայի ղեկավարման էլ.վահանակ (плата) | հատ | 81000 |
| | Պլաստմասե դետալների մոնտաժում | հատ | 45000 |
| | Եռաքայլ փականի տեղադրում | հատ | 55000 |
| | Ընդարձակման բաքի տեղադրում | հատ | 70000 |
| | Ներդիրների մոնտաժում | հատ | 25000 |
| | Մեկ անգամյա տեխսպասարկում | հատ | 25000 |
| | Ջրատաքացման կաթսայի ապամոնտաժում, 150 կվտ ջերմաարտադրության | լ-կ | 195000 |
| | Ջրատաքացման կաթսայի ապամոնտաժում, 300 կվտ ջերմաարտադրության | լ-կ | 203000 |
| | Դատարկման սողնակային փականնրի ապամոնտաժում,Φ50մմ | լ-կ | 1000 |
| | Պողպատե խողովակաշարի ապամոնտաժում, Φ57մմ | մետր | 600 |
| | Սողնակային փականների ապամոնտաժում, Φ80մմ | լ-կ | 4000 |
| | Գազայրիչային մեկ գազայրիչով սարքավորումների ապամոնտաժում 150կվտ hզ. | լ-կ | 24000 |
| | Կաթսայի նորոգման համար այրման խցի և ճակատային մասերի և ծխահեռացման խողովակների ապամոնտաժում | լ-կ | 147000 |
| | Կաթսայի ճակատային մասերի վերականգնում՝ 8մմ հաստ., 800*1200 մմ չափերի պողպատե թիթեղով | հատ | 496000 |
| | Կաթսայի նորոգման՝ այրման խցի համար 8մմ հաստ., 1.9մ$^2$ պողպատե թիթեղ | հատ | 507000 |
| | Կաթսայի ծխահեռացման DN=51x3մմ պողպատե խողովակների մոնտաժում | լ-կ | 659000 |
| | Կաթսայի ջերմամեկուսացում 5սմ հաստ. փայլաթիթեղապատ հանքաբամբակով | լ-կ | 23000 |
| | Մետաղական ջրատաքացուցիչ կաթսայի մոնտաժում | լ-կ | 56000 |
| | Պողպատե խողովակաշարի մոնտաժում, Φ57մմ | մետր | 9500 |
| | Սողնակային փականների մոնտաժում, Φ80մմ | լ-կ | 132400 |
| | Դատարկման սողնակային փականնրի մոնտաժում,Φ50մմ | լ-կ | 72400 |
| | Պողպատե խողովակաշարի մոնտաժում, Φ57մմ | մետր | 9500 |
| | Ջրա/շոգե/տաքացման պողպատե, հրակայուն խողովակավոր, 150կվտ հզորության, կաթսայի համակարգերի համատեղ աշխատանքների /ավտոմատ համակարգ, ՀՉԱ և այլ/ գործարկում և կարգաբերում | համակարգ | 108000 |
| | Ջրա/շոգե/տաքացման պողպատե, հրակայուն խողովակավոր, 300կվտ հզորության, կաթսայի համակարգերի համատեղ աշխատանքների /ավտոմատ համակարգ, ՀՉԱ և այլ/ գործարկում և կարգաբերում | համակարգ | 119000 |

| | | | |
|---|---|---|---|
| | **20-50 կՎտ կաթսաների համար** | | |
| | Օդահան խողովակ | հատ | 15600 |
| | Ջերմահալվող էլ. ապահովիչ | հատ | 6000 |
| | Տրանսֆորմատոր ցածրացնող (կարգավորող) | հատ | 3600 |
| | Փակ այրման խցիկ | հատ | 15600 |
| | Էլեկտրական կառավարման հսկողություն (միավոր պրոցեսորով) | հատ | 48000 |
| | Ջերմակիր ճնշման սենսոր | հատ | 9600 |
| | Գազի կոլեկտոր 14 ներարկիչով, բնական կամ հեղուկացված գազի համար | հատ | 12000 |
| | Գազամատակարարում | հատ | 42000 |
| | Մուտք ելք DHW | հատ | 8400 |
| | Կերամիկական տաքացուցիչ (սառցապատման դեմ) | հատ | 28800 |
| | Մուտք ելք ջերմակիր | հատ | 84000 |
| | Կեղտանջատիչ ֆիլտր | հատ | 4800 |
| | Շրջանառության պոմպ մագնիսական միացումով | հատ | 48000 |
| | Պողպատե երկրորդական DHW ջերմափոխանակիչ | հատ | 36000 |
| | Մոդելավորվող օդի փչումով օդափոխիչ | հատ | 36000 |
| | Ուղղորդող փական | հատ | 18000 |
| | Պղնձի առաջնային ջերմափոխանակիչ | հատ | 48000 |
| | Ընդարձակման բաք (հակառակ կողմում) | հատ | 36000 |
| | Արտանետվող խողովակ | հատ | 16800 |
| | Համառանցք ծխնելույզ մինչև 60սմ պատի միջով արտանետվող գազերը հեռացնելու համար | հատ | 18000 |
| | Թվային հեռակառավարման վահանակ վերահսկման և անսարքությունների ախտորոշման համար | հատ | 12000 |
| | • ***Հանրագումարային գին՝*** | **ՀՀ դրամ** | **4 137 600** |

***Չափաբաժին N7***

| Չափաբաժնի համարը | Բնութագրող ցուցանիշները | Չափման միավորը | Ծառայության առավելագույն միավոր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 7 | **Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ, այդ թվում** | | |
| | Սառնարանի ռադիատորի լվացում | հատ | 27000 |
| | Սալօջախի մեկ տաքացուցիչի (տեն) տեղադրում | հատ | 13500 |
| | Սառնարանի կոմպրեսորի և ֆիլտրի փոխարինում, ֆրիոնի լիցքավորում | հատ | 110000 |
| | Սառնարանի հովացուցիչի փոխարինում | հատ | 30000 |
| | Սառնարանի թերմոռելեի փոխարինում | հատ | 17000 |
| | Սառնարանի թերմոշարժիչի փոխարինում | հատ | 23000 |
| | Սառցախցիկի համակարգչի տեղադրում | հատ | 39500 |
| | Սառնարանի լիցքավորում ֆրիոնով | հատ | 23000 |
| | Լվացքի մեքենայի միկրոսխեմայի փոխարինում | հատ | 48000 |
| | Լվացքի մեքենայի շարժիչի վերանորոգում | հատ | 39000 |
| | Սառնարանի թերմոստատի փոխարինում | հատ | 9200 |
| | Սալօջախի մեկ սալիկի տեների փոխարինում | լ-գմ | 27500 |
| | Սալօջախի սալիկի փոխարինում նորով | հատ | 30000 |
| | Սալօջախի բռնակով անջատիչի փոխարինում | հատ | 4500 |
| | Թերմոլարի փոխարինում | լ-գմ | 8000 |
| | 60 A թողարկիչի փոխարինում (КНЭ-200, КНЭ 250) | լ-գմ | 45000 |
| | Ջերմակարգավորման ռելեի փոխարինում (КНЭ-200, КНЭ 250) | հատ | 45000 |
| | Տաքացուցիչ տեների (5 Կվտ) փոխարինում (КНЭ-200, КНЭ 250) | լ-գմ | 56000 |
| | 60լ էլ. կաթսայի տաքացուցիչի փոխարինում (КНЭ-60) տենի | հատ | 23000 |
| | 250լ էլ. կաթսայի ջերմակարգավորիչի փոխարինում (КНЭ-250) | լ-գմ | 39000 |
| | Էլ. սարքավորման տեխնիկական սպասարկում | հատ | 3300 |

| | | |
|---|---|---|
| Հանրագումարային գին՝ | ՀՀ դրամ | 660 500 |

*Ծանոթություն՝*

*-Վերանորոգման համար օգտագործվող նյութերը և փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված:*

*-Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն գործարանային և չօգտագործված վիճակում:*

*-Վերը նշված միավոր արժեքների մեջ ներառված են օգտագործվող նյութերը:*

*- Թերի վերանորոգման հետևանքով խափանված սարքավորումը կրկնակի վերանորոգվում է ծառայություն մատուցողի հաշվին:*

*-Մատուցման ժամկետը սահմանվում է պատվիրատուի կողմից պահանջի ներկայացման օրվանից 4 օրացուցային օրվա ընթացքում, բացառությամբ վերանորոգումն իրականացնելու համար պահեստամասի բացակայության և դրա պատվերի ուշացման դեպքերի, որի ժամանակ Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել այլ ժամկետ, առաջին մատուցման ժամկետը պահանջի օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:*

*-Ծառայությունների գնումը կիրականացվի 1-ից 4-րդ եռամսյակների ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2026թ:*

*-Վերանորոգվող սարքավորումը տեղում վերանորոգելու անհնարինության դեպքում, տեղափոխումը ԱԱԾ ստորաբաժանումներից վերանորոգող կազմակերպություն և հետ ԱԱԾ ստորաբաժանում կատարվում է ՀՀ ԱԱԾ միջոցներով և հաշվին:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ՝ ------------------------------- Ա. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

Անուշ Պետրոսյան Ա/Ձ
ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570004526688010 0
ՀՎՀՀ 49557658

Ա/Ձ՝ ------------------------------- Ա. Պետրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«19» 03 2026թ. կնքված
ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-26/6-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ/4 (11/153-2026) ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 5 | 50111260/1 | Էլեկտրական սարքերի վերանորոգման ծառայություններ | 0 | 0 | 0 | 900,000.00 | 1,200,000.00 | 1,500,000.00 | 1,800,000.00 | 2,100,000.00 | 2,400,000.00 | 2,700,000.00 | 2,850,000.00 | 3,000,000.00 | 3,000,000.00 |
| 6 | 50531110/1 | Կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայություններ | 0 | 0 | 0 | 1,440,000.00 | 1,920,000.00 | 2,400,000.00 | 2,880,000.00 | 3,360,000.00 | 3,840,000.00 | 4,320,000.00 | 4,560,000.00 | 4,800,000.00 | 4,800,000.00 |
| 7 | 50711100/1 | Շենքերում տեղակայված էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ | 0 | 0 | 0 | 600,000.00 | 800,000.00 | 1,000,000.00 | 1,200,000.00 | 1,400,000.00 | 1,600,000.00 | 1,800,000.00 | 1,900,000.00 | 2,000,000.00 | 2,000,000.00 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ ------------------- Ա. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

Անուշ Պետրոսյան Ա/Ձ
ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 15700045266880100
ՀՎՀՀ 49557658

Ա/Ձ՝ ------------------- Ա. Պետրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«____» _______________ 2026թ. կնքված
ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-26/6-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ/4 ծածկագրով
պայմանագրի

Պայմանագրի կողմ
_______________
_______________
գտնվելու վայրը _______
հհ _______________
հվհհ _______________

Պատվիրատու
_______________
_______________
գտնվելու վայրը _______
հհ_______________
հվհհ_______________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _______________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_______________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«____» ________________ 2026թ. կնքված*
*ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-26/6-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ/4 ծածկագրով*
*պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ___________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«____» _________________ 2026թ. կնքված*
*ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-26/6-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ/4 ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

__________ֆինանսական գործակալի անվանումը____________ հայտնում է, որ.

1. ____պատվիրատուի անվանումը___-ի և _________կատարողի անվանումը______-ի միջև «----» ___________ 20 թ. Կնքված «---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և __կատարողի անվանումը_________-ի միջև «----» ___________ 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____________________________________________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_______________
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.